Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 30-ի N 875 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2005 թվականի
ապրիլի 28-ի N 562 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական գույքի հաշվառման գրանցամատյանում (այսուհետ՝ գրանցամատյան) առկա տեղեկություններից տեղեկատվություն տրամադրելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանից տեղեկատվությունը (այսուհետ՝ տեղեկատվություն) տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման N 4 հավելվածով (այսուհետ՝ N 4 հավելված) սահմանված ձևերին համապատասխան:

3. Գրանցամատյանում առկա տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական հիմնարկներին և կազմակերպություններին, ինչպես նաև իրավաբանական ու ֆիզիկական անձանց (այսուհետ՝ դիմումատու):

4. Տեղեկատվություն ստանալու համար դիմումատուն սույն կարգին կից դիմումի ձևին համապատասխանող գրավոր դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

5. Դիմումատուի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ներկայացված դիմումը պետք է լինի հայերենով,

եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ, և դրանում պետք է նշվի՝

1) դիմումատուի անունը, ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և կազմակերպաիրավական ձևը կամ դրանց կողմից լիազորված անձի անունը, ազգանունը,

2) դիմումատուի գտնվելու վայրը (հասցեն),

3) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում),

4) հայցվող տեղեկատվությունը,

5) տեղեկատվություն ստանալու եղանակի մասին նշում:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գրանցամատյանից տեղեկատվությունը դիմումատուին տրամադրում է դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ մատուցվող ծառայությունների դիմաց սույն կարգի 9-րդ կետին համապատասխան և 11-րդ կետով սահմանված չափով վճարը կանխիկ կամ փոխանցման միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից նշված բանկային հաշվին փոխանցելուց հետո:

7. Գրանցամատյանում առկա տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային կրիչով և (կամ) թղթային եղանակով՝ դիմումատուի կողմից նշված եղանակին և սույն կարգի 8-րդ կետով սահմանված ձևերին համապատասխան: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պաշտոնական կայքի միջոցով՝ դիմումատուի կողմից էլեկտրոնային եղանակով դիմումը ներկայացնելու դեպքում տեղեկատվությունը տրամադրվում է համացանցի միջոցով և (կամ) էլեկտրոնային կրիչով և (կամ) թղթային եղանակով՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված ձևերին համապատասխան:

8. Գրանցամատյանում առկա տեղեկատվությունը տրամադրվում է համապատասխանաբար՝

1) պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մասին տեղեկանքի (N 4 հավելվածի N 1 ձև) ձևով.

2) պետական սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների մասին տեղեկանքի (N 4 հավելվածի N 2 ձև) ձևով.

3) պետական սեփականություն հանդիսացող մտավոր սեփականության օբյեկտների մասին տեղեկանքի (N 4 հավելվածի N 3 ձև) ձևով.

4) պետական սեփականություն հանդիսացող ճանապարհների մասին տեղեկանքի (N 4 հավելվածի N 4 ձև) ձևով.

5) պետական սեփականություն հանդիսացող ջրատարների և ջրամբարների մասին տեղեկանքի (N 4 հավելվածի N 5 ձև) ձևով.

6) Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (բաժնեմաս) ունեցող իրավաբանական անձանց մասին տեղեկանքի (N 4 հավելվածի N 6 ձև) ձևով:

9. Գրանցամատյանից տեղեկատվություն ստանալու հետ կապված ծախսերը կրում է դիմումատուն՝ բացառությամբ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով նախատեսված՝ տեղեկատվության անվճար տրամադրման դեպքերի:

10. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական հիմնարկներին և կազմակերպություններին, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով այլ դիմումատուներին սույն կարգով նախատեսված տեղեկատվությունը տրամադրվում է անվճար:

11. Թղթային եղանակով տրամադրվող՝ 10 էջը գերազանցող տեղեկատվության համար գանձվող գումարի չափը չպետք է գերազանցի տեղեկատվության տրամադրման համար կատարված փաստացի և ողջամիտ ծախսերը, սակայն յուրաքանչյուր էջի համար գանձվող գումարը չպետք է գերազանցի 10 դրամը:

12. Սույն կարգին համապատասխան մատուցվող ծառայությունների դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հավաքագրված դրամական միջոցներն օգտագործվում են գրանցամատյանի վարման աշխատանքների հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով:

13. Եթե Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը չի տիրապետում դիմումատուի կողմից պահանջվող տեղեկատվությանը, կամ տեղեկատվության տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, կամ տեղեկատվությունը հանդիսանում է պետական գաղտնիք կամ օրենքով պահպանվող այլ տեղեկատվություն, ապա տվյալ դիմումատուի դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը պարտավոր է դրա մասին գրավոր տեղեկացնել դիմումատուին: »:

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
գույքի կառավարման վարչության պետ

պարոն _____ -ին

_____
(դիմումատուի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը,
կազմակերպաիրավական ձևը կամ դիմումատուի լիազորված անձի անունը, ազգանունը)

_____
(դիմումատուի գտնվելու վայրը (հասցեն)

Հեռախոսահամարը _____
Էլեկտրոնային փոստը _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ տրամադրել _____
(նշել հայցվող տեղեկատվությունը)
_____
_____
Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել
_____ եղանակով:
(նշել էլեկտրոնային կրիչով կամ թղթային ձևը)

Դիմումատու _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ -ի 20 թ.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 30-ի N 875 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2005 թվականի
ապրիլի 28-ի N 562 - Ն որոշման

Ձ Ե Վ Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անվանումը	Գտնվելու վայրը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Սպասարկ-ման համար հատկաց-ված հողամասի մակերեսը (հա)	Շենքի կամ շինության մակերեսը (քառ. մ)			Սեփականության իրավունքի գրանցման վկայականի		Անշարժ գույքն օգտագործողի		Օգտագործման տրամադրված անշարժ գույքի մակերեսը (քառ. մ)	
					ընդհանուր	նկուղ	կիսա-նկուղ	համարը	ամսաթիվը	անունը (անվանումը)	կազմակերպաիրա-վական ձևը	հողամասը	շենքը կամ շինությունը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Տրանսպորտային միջոցի անվանումը և մակնիշը	Պետական համարանիշը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)
1	**2**	**3**	**4**

Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անվանումը	Քանակը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)
1	**2**	**3**	**4**

Ձև N 4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Ճանապարհի անվանումը	Նշանակությունը	Պայմանանիշը և համարը	Սեփականության իրավունքի գրանցման վկայականի		Երկարությունը (կմ)	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)
				համարը	ամսաթիվը		
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**

Ձև N 5

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՁՐԱՏԱՐՆԵՐԻ ԵՎ ՁՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Ձրատարի կամ ջրամբարի անվանումը	Գտնվելու վայրը	Տեսակը	Շահագործ-ման հանձնման տարեթիվը	Սեփականության իրավունքի վկայականի գրանցման		Ձրատարի տրամագիծը (մմ)	Ձրատարի գծամետրը	Ձրամբարի մակերեսը (քառ. մ)	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)
					տարեթիվը	համարը				
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**

Ձև N 6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ (ԲԱԺՆԵՄԱՍ) ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Իրավաբանական անձի անվանումը	Կազմակերպա-իրավական ձևը	Գտնվելու վայրը	Պետական մասնակցության չափը (հազ. դրամ)	Պետական մասնակցու-թյան չափը (%)
1	**2**	**3**	**4**	**5**	**6**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ